

ԿԱՐԾԻՔ

Ա.Բ.ՊԵՏՏՐՈՍՅԱՆԻ «ԳԵՐՄԱՆԵՐԵՆ ԲՆԱԳՐԵՐԻ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՉ ԼԵԶՎԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ»

ԺԳ. 00.02 – «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (գերմաներեն լեզու)
մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական
աստիճանի հայցման ատենախոսության մասին

Ժամանակակից աշխարհում, չնայած անզլերենի միջազգայնացմանը, գլոբալիզացման գործընթացներին, այնուամենայնիվ մեծ դեր են խաղում այլ լեզուներ, հատկապես նրանք, որոնց կրողները բազմադարյան մշակույթի, ավանդույթների, հարուստ գիտական և գրական ժառանգության ներկայացուցիչներ են: Այդ լեզուներից է անշուշտ գերմաներենը, որի դերը վերջին տասնամյակներում զգալիորեն աճում է: Այդ աճը պայմանավորված է մի շարք հանգամանքներով, որոնցից մեկն է նաև գերմանախոս երկրների կողմից վարած ճիշտ լեզվաքաղաքականությունը:

Եվրախորհրդի կողմից մշակված լեզուների իմացության մակարդակներում առանձնացված են լեզվի տիրապետման չորս հմտություններ՝ ընթերցանություն, գրավոր և բանավոր հաղորդակցություն, ունկնդրում, որոնց ուսուցման ճիշտ ռազմավարությունն ու մեթոդաբանությունը կնպաստեն տվյալ լեզվի լիարժեք տիրապետմանը:

Հաշվի առնելով ժամանակակից մարտահրավերները՝ այդ հմտություններից անշուշտ առաջնայինը հաղորդակցականն է, սակայն պակաս կարևոր չէ լեզվի տիրապետման հարցում նաև ընթերցանությունը, հատկապես ոչ լեզվական բուհերում և բաժիններում, որտեղ օտար լեզվի ուսուցման հիմնական նպատակներից է ճիշտ մշակված մոտեցումներով ծանոթացնել մասնագիտական տեքստերին, խթանելով ուսանողին ընթերցել իր մասնագիտական ոլորտին առնչվող օտարալեզու գրականությունը: Հետևաբար ատենախոսության թեման անշուշտ արդիական է և ընձեռում է նոր հնարավորություններ բնագիր տեքստերի բովանդակությունը ստուգելու համար:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, գրականության ցանկից և հավելվածից:

Ներածությունը համապատասխանում է ՀՀ ԲՈՀի կողմից ներկայացված պահանջներին: Այստեղ ներկայացված են թեմայի արդիականությունը, այն ընտրելու պատճառները, նպատակներն ու հետազոտական խնդիրները, օբյեկտը, առարկան, գիտական վարկածը, մոտեցումները և պաշտպանության ներկայացված դրույթները: Հարկ է նշել, որ նշված դրույթները ձևակերպված են հստակ ու հասկանալի և որևէ առարկություններ չեն առաջացնում:

Ատենախոսության առաջին գլուխը «Ընթերցանության՝ որպես ընկալողական խոսքային գործունեության մեթոդական հիմքերը» բաղկացած է երեք ենթագլխից: Առաջին ենթագլխում «Ժամանակակից լեզվակրթության սկզբունքները» խորագրով ներկայացված են Եվրախորհրդի կողմից մշակված լեզվական քաղաքականությունն իր մակարդակներով և ցուցիչներով: Ապա հաջորդ ենթագլուխներում՝ «Ընթերցանության՝ որպես ընկալողական խոսքային գործունեության ուսուցման նպատակները» և «Ընդհանուր բովանդակության ծանոթացնող ընթերցանության առանձնահատկությունները» հեղինակը անդրադառնում է ընթերցանության տեսակներին, չափանիշներին, նպատակներին, ինչպես նաև ընթերցանության գործընթացում անհրաժեշտ հմտությունների ու կարողությունների ձևավորմանը: Ատենախոսը մեջբերումներ է անում նշանավոր մեթոդիստների համապատասխան աշխատություններից և աղյուսակում պատկերավոր ամփոփում ընդհանուր բովանդակությանը ծանոթացնող ընթերցանության կարողությունները:

«Ոչ լեզվական բուհերի ուսանողների՝ ընթերցանության ընկալման ստուգման առանձնահատկությունները» գլխում առանձին ենթագլուխներում Ա. Պետրոսյանը քննարկում է ոչ լեզվական բուհերում ստուգման առանձնահատկությունները, ստուգման և գնահատման չափանիշները, ստուգման օբյեկտները: Հատկապես հատկանշական է այն, որ ընթերցանության ստուգման ավանդական ձևերը, ինչպիսիք են հարցերին պատասխանելը, բովանդակության վերարտադրումը, թարգմանությունը ժամանակակից լեզվաիրավիճակում լիովին չեն արտացոլում ընկալողական խոսքային գործունեության էությունը:

Նույն գլխի առանձին ենթագլխում խոսվում է սովորողների հայտորոշիչ ստուգման մասին՝ թեստավորման միջոցով: Այս ենթագլխում ատենախոսը ներկայացնում է 2017 թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին Խ.Աբովյանի անվ. ՀՊՄՀ-ում անցկացրած փորձարարական թեստավորման արդյունքները ոչ լեզվական ֆակուլտետներում՝ ընդգրկելով թեստում ընթերցանությունն ստուգող հինգ հիմնական առաջադրանքները՝ բազմընտրանքային թեստ, ընտրել ճիշտ/սխալ տարբերակ, համակցում, հարց-պատասխանի համակցում և C-test-ը: Ողջունելի են մանրակրկիտ ներկայացրած արդյունքները՝ աղյուսակի և տրամագրերի օգնությամբ, որն ավելի հստակեցնում ու պարզեցնում է նյութն ու ծագած խնդիրները: Այնուհետև Ա. Պետրոսյանը վերլուծում է սխալները՝ նշելով, որ փորձարկվողներին բնորոշ են ինչպես բառային, հատկապես բառակազմական, այնպես էլ քերականական միավորների թերի տիրապետումը: Ընդ որում գրեթե բոլոր ուսանողների մոտ առկա են տիպիկ սխալներ, որի հիման վրա էլ ատենախոսը 3-րդ գլխում մշակում է թեստավորման նոր ռազմավարություն՝ տեքստերի ընդհանուր բովանդակության ընկալման վերաբերյալ:

Բարձր գնահատականի է արժանանում 3-րդ գլխում վերլուծած տեսամեթոդական հիմունքները: Ա. Պետրոսյանը անդրադառնում է ինչպես Խորհրդային միության հայտնի մեթոդիստներին, այնպես էլ ժամանակակից անգլախոս և գերմանախոս հետազոտողներին, ինչպիսիք են L.S.Fuchs-ը, Sheils-ը և այլոք: Ելնելով անցկացրած թեստավորման արդյունքներից՝ ատենախոսը առաջարկում է նոր ռազմավարություն տեքստի ընդհանուր բովանդակության ընկալման վերաբերյալ: Նա բաժանում է փորձարկությունը 3 փուլի: Առաջին փուլում ստուգում է լեզվական կարողությունները: Երկրորդ փուլը վերաբերում է ընթերցանության ընդհանուր բովանդակության ըմբռնման կարողությունների ու հմտությունների ձևավորմանն ու զարգացմանը: Ապա ատենախոսը 3-րդ փուլում անցկացնում է թեստավորում: Ներկայացված առաջադրանքներն ունեն հետևյալ տեսակները.

1. բազմընտրանքային թեստ /լեզվական կարողությունների ստուգում/
2. հարցադրում տեքստում առկա փաստերի վերաբերյալ /W-Fragen/
3. գտնել ճիշտ-սխալ պատասխանը
4. համակցում /բովանդակության ստուգում/
5. տեքստում լրացնել բաց թողնված բառերը (Lückentest):

Ա. Պետրոսյանը, ամփոփելով փորձարկության արդյունքները, արձանագրում է, որ մշակված ռազմավարությունը ավելի արդյունավետ ու արժանահավատ է:

Եզրակացության մեջ ատենախոսը պատշաճ ձևով ներկայացնում է աշխատանքի արդյունքները, բացահայտելով նոր չափանիշներ, որոնցից կարող ենք առանձնացնել հիմնական կարևոր տեղեկատվության ընկալման ծավալը և տեքստի բովանդակության վերարտադրման սահմանափակումը, որը հատկապես կարևոր է մասնագիտական տեքստեր ընթերցելիս: Մենք համամիտ ենք նաև այն դրույթի հետ, որ տեքստը հասկանալու համար կարևոր գործոններից է տեքստի տարբեր մակարդակների ըմբռնման կարողությունը, ընդհուպ մինչև հեղինակի մտահղացման բացահայտումը: Ա. Պետրոսյանը շեշտում է դրույթներից մեկում նաև cloze-test-ի կարևորությունը, որը լայն տարածում ունի գերմանացի մեթոդիստների թեստավորման համակարգում:

Հավելվածում ներկայացված են փորձարարական թեստավորումներում ներառված տեքստերն ու վարժությունները, ինչպես նաև ընթերցանության բովանդակությունը ստուգելու համար տարբեր առաջադրանքներ:

Այնուամենայնիվ կցանկանայինք որոշ դիտողություններ նշել, որոնք, մեր կարծիքով, կօգնեին ավելի լիարժեք դարձնել ատենախոսությունը.

1. Մեր կարծիքով ճիշտ կլիներ փորձարարական թեստավորման ժամանակ առանձնացնել թեստային առաջադրանքները ոչ լեզվական ֆակուլտետների և լեզվական բաժինների համար, որտեղ գերմաներենը դասավանդվում է որպես 2-րդ օտար լեզու, քանի որ թե՛ ժամաքանակի, թե՛ նպատակների առումով նրանք տարբեր են, հաշվի առնելով այն, որ ատենախոսության նպատակը ընթերցանության ռազմավարության մշակումն է ոչ լեզվական բաժիններում: Տարբեր է նաև այդ փուլում ուսանողների լեզվի տիրապետման մակարդակը: Բացի այդ, լեզվական ֆակուլտետների ուսանողների լեզվական իրազեկությունն ու կարողությունները ավելի խորն ու ընդարձակ են, ուստի արդյունքն էլ կարող է տարբեր լինել:
2. Փորձարարական թեստավորումների բոլոր տեքստերն ու առաջադրանքները վերցված են գերմանական ուսուցողական կայքերից, որը անշուշտ ողջունելի է

օրյեկտիվ պատկեր ստանալու համար՝ հաշվի առնելով մեթոդիստների փորձն ու գիտելիքները: Սակայն, մեր կարծիքով, ճիշտ կլիներ գիտական արդյունքները ամփոփելուց հետո բնագիր տեքստերի հիման վրա մշակել տարբեր մասնագիտությունների համար նախատեսված առաջադրանքներ՝ նշելով թիրախային խումբը:

3. Աշխատանքում կան նաև որոշ վրիպակներ (էջ 8,12, 36, 39,41,63,66,70, 71) անճշտություններ (էջ 21,31):

Վերը նշված դիտողությունները և վրիպումները որակ չեն կազմում և բնավ չեն ազդում ատենախոսության ընդհանուր արժեքի վրա:

Ուստի, Ա. Պետրոսյանի «Գերմաներեն բնագրերի ընթերցանության բովանդակության ստուգման ռազմավարությունը ոչ լեզվական ֆակուլտետում» աշխատանքը համապատասխանում է թեկնածուական ատենախոսությանը ներկայացվող պահանջներին, և ատենախոսան արժանի է մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Ընդդիմախոս՝

բ.գ.թ., դոցենտ



Գայանե Սավոյան

06.06.2021

